



ԵՐԿՐԵԱՐԹԻ, 15 ՅՈՒԼԻՍ, 2024

ՏԵՐՈՒՄԱՆ ԱՊՈԹ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս Կիս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԻՆ

Ինձի հանդէպ ցուցաբերէ քու սէրդ, Տէր,
եւ ցոյց Կուր քու փրկութիւնդ, ինչպէս ինքդ խոստացար.
որպէսզի ես պատասխան Կամ բոլոր անոնց՝ որ զիս կը նախապրեն.
որովհետեւ ես քու խօսքիդ վստահեցայ:
Թոյլ մի Կար որ ճշմարտութիւնդ խօսելէ դադրիմ,
որովհետեւ քու արդար դատաստաններուդ վրայ դրի իմ յոյս:
Պիտի գործադրեմ Օրէնքդ միշտ, անդադար եւ միչեւ վերջ:
Ազատութեամբ պիտի ընթանամ,
որովհետեւ հրահանգներուդ կը հնազանդիմ:
Թագաւորներու ներկայութեան իսկ
պատուիրաններուդ մասին պիտի խօսիմ, առանց քաշուելու:
Հաճոյք կ'առնեմ պատուէրներէդ, որոնք այնքան կը սիրեմ:
Փառք կու Կամ պատուէրներուդ համար, որ կը սիրեմ,
եւ միշտ կը խորհիմ կանոններուդ մասին:

ՇԱՐՎԱՆ

Սուրբդ սրբոց Երրորդութիւն, զՄեզ մաքրեալ քեզ բնակութիւն.
Շնորհեա ընդ մանկանցն առազատի Հանգչիլ ընդ քեզ ի յանկողնի.
Տուր զհայցուած բարեկամին զՓոխ երից նկանակին.
Չի ի տուրնջեան և զհշերի Տացուք քեզ փառս անլռելի:
Երևելի լոյս ստեղծեր, զՏիւ և զգիշեր բաժանեցեր.
Ծագեա մեզ. Տէ՛ր, ի զհշերի զճառագայթս իմանալի.
Տուր յամենայն ժամանակի զՊահպանող աջ քո հովանի.
Չի ի տուրնջեան և զհշերի Տացուք քեզ փառս անլռելի:
Սիրոյ քո հուր արկեալ յերկիր՝ Բորբոքեցի ի հոգիս մեր.
զԽորհուրդ սրտից մեր մաքրեցէ՛ զԼոյս զիտութեան քո փայլեցէ.
Ի քնոյ մահու զմեզ զարթուցէ, զՄիտս բոցով քո վառեցէ.
Չի ի տուրնջեան և զհշերի Տացուք քեզ փառս անլռելի:

ԱՊՈԹ

Քու դիմացդ ծունկի եկած, ամբողջ սրտով կ'աղաչենք եւ գթութիւնդ կը հայցենք, բարերար եւ բազումողորմ Աստուած: Ինչպէս քու ծառաներուդ խոստացար՝ ըսելով. «Ինչ որ հաւատարմով խնդրէք Հօրմէն՝ Որդիին անունով, պիտի արտօմ ձեզի», այս պահուն շնորհէ եւ իրենց բարի կատարումին հասցուր քեզի հաւատարմութեան խնդրանքներդ, որովհետեւ քեզի ապաւինած ենք: Քու առաքողորմութեամբ միտաբար մեզ այս կեանքին մէջ, եւ առաջնորդելով՝ երկինքի անպարմելի արքայութեանդ հասցուր, որպէսզի ամենասուրբ Երրորդութիւնդ փառաբանուի եւ պատուուի. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՀԱՐԱՎԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԿ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յառեար ի մեռելոց: (X 3)

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց:

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա՛:

ՀԱՐԱՎԱՆ-ԱՐՈՐՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Սմենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղէլոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԱՂՄՈՍ 63

ԾԱՐԱԻ ԵՄ ՔԵԶԻ, ՈՎ ՏԷՐ

Ով Աստուած, իմ Աստուածս, քեզ կը փնտրեն անձկագին,

հոգիս ծարաւ է քեզի, մարմինս քեզի կը փափաքի՝

խոպան, ճաթոքած, անջուր մնացած հողի պէս:

Ուստի սրբարանդ եկայ՝ քեզ տեսնելու,

գօրութիւնդ եւ փառքդ դիպելու համար:

Որովհետեւ քու սէրդ կեանքէն աւելի կ'արժէ.

ուստի շրթներս պիտի գովաբանեն քեզ,

ամբողջ կեանքիս ընթացքին պիտի օրհնաբանեն քեզ,

եւ ձեռքերս աղօթքով դէպի քեզ բարձրացնեն:

Հոգիս խնձոյքի մէջ պիտի ըլլայ ու կշտանայ,

եւ շրթներս ցնծութեան երգերով պիտի օրհներգեն քեզ:

Երբ կը պառկիմ՝ քեզ կը յիշեն,

գիշերն ամբողջ՝ քու մասիդ կը մտածեն,

որովհետեւ օգնական եղար ինձի.

քու թելերուդ հովանիին տակ ցնծութեամբ կ'երգեն:

Ես քեզի կ'ապուած կը մնամ,

եւ քու աջդ կը պահէ զիս:

Բայց անոնք որ կը փորձեն կորուստի մատնել զիս,

գեղնին տակ պիտի անցնին.

սուրի պիտի մատնուին,

եւ շնագայլերու բաժին պիտի դառնան:

Բայց թագաւորը Աստուծոյ պիտի ուրախանայ,

եւ Աստուծոյ անունով երդում ընողները պիտի օրհներգեն զայն,

մինչ սրախօս բերանները պիտի փակուին:

Պահապան ամենայնի Քրիստոս,

աջ է՛ն հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,

ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,

ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.

եւ ողորմեա՛ է՛ն արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ԾԱՐԱԲ ԵՍ ՔԵԶԻ, ՈՎ ՏԷՐ

Հերարքրական, երկու փարբեր առարկաներ երբ նոյն երեւոյթին դիմաց կը գրնուին, երկու փարբեր արդիւնք կու փան: Ուրեմն, հարցը կը վերաբերի թէ ինչ առարկայի մասին է խօսքը: Օրինակ, երբ առնենք կաւ եւ սառոյց, եւ այս երկուքը արեւուն դիմաց դնենք, պիտի տեսնենք, որ կաւի պարագային աւելի կը կարծրանայ, իսկ սառոյցի պարագային կը հալի: Ահա նոյնն է պարագան նաեւ մարդու, ու անոր հոգիին: Մարդ կայ, որուն սիրտը կաւի նման է, իսկ մարդ կայ որուն սիրտը սառոյցի: Ինչո՞ւ այս օրինակ, որովհետեւ մեր առօրեայ կեանքի դժուարութիւնները, մեզ կը դնեն որոշ կացութեան մը դիմաց, նեղութիւնները, դժուարութիւնները, ցաւերն ու փառապանքները կամ մարդս աւելի կը մօտեցնեն Աստուծոյ, կամ հակառակը աւելի կը հեռացնեն Աստուծմէ: Ահա այս օրինակով նաեւ Դաւիթ, նեղութեան եւ դժուարութեանց մէջ, առաւել եւս կը մօտենայ Աստուծոյ, անոր հակառակ օրինակը՝ Սաուուդ, ան աւելի իր սիրտը կը կարծրացնէ, ինչպէս օրինակ՝ Փառաւոն:

Այս սաղմոսը այդ մէկը ցոյց կու փայ, Դաւիթ թափառական, անդաստական, մէկ փեղէ միւս փեղ փախչող, կեանքը վրանգուած, անապարհի մէջ ապրող, եւ թշնամիները զինք կը փնտրեն սպաննելու համար: Այս կացութեան մէջ, Դաւիթ իր հանգիստը կը գտնէ Աստուծոյ մէջ: Սա չի նշանակեր, որ իր կացութիւնը մեղմացաւ, այլ իր դիտելու եղանակը փոխուեցաւ, իր սպասումներն ու ակնկալութիւնները փոխուեցան: Մենք ալ յաճախ նեղութեան եւ դժուարութեան մէջ, երբ Աստուծոյ կը դիմենք, սպասումը ունինք որ ամէն ինչ վերջ պիտի գտնէ, բայց ընդհակառակը, կարծէք աւելի կը ծանրանայ կացութիւնը, եւ կը սկսինք մտածելու, թէ արդեօք ինչ եղաւ, աղօթեցինք, մոմ վառեցինք, ուծք ըրինք, եկեղեցի սկսանք յաճախել, փոխանակ կացութիւնը մեղմանալու աւելի ծանրացաւ: Պահ կըլլայ, ուր կը սկսինք մտածելու հրաժարելու մասին: Աչքի առաջ ունենանք Իսրայէլի ժողովուրդը, երբ անոնք 400 փարիէ աւելի սպրուկ էին Եգիպտոսի մէջ, դուրս եկան Աստուծոյ առաջնորդութեամբ եւ անապարհի ճամբով երթալու դէպի խոստացուած երկիր: Շար ժամանակ չանցած, անոնք ունեցան հացի եւ ջուրի դժուարութիւն: Ի՞նչ ըսին. «Մենք Եգիպտոսի մէջ աւելի լաւ էինք, հաց ու ջուր ունէինք: Մեզ անապար բերիր, որպէսզի սովէն մեռնինք»:

Ահա այս Սաղմոսը մեզի կը սորվեցնէ, թէ նեղութեան եւ դժուարութեան մէջ ինչ ընել:

ա. Աստուծոյ փափաքի: Ինչպէս Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Մէկ փափաք ունիմ, Քրիստոսի հետ ըլլալ»: Դաւիթ ալ այդ փափաքը կը ներկայացնէ ըսելով. «Ով Աստուած, իմ Աստուածս, քեզ կը փնտրեն անձկագին: Հոգիս ծարաւի է քեզի»: Այն նոյն հոգին է, որ նախորդ Սաղմոսին մէջ կըլսէր. «Հոգիս միայն Աստուծով իր հանգիստը կը գտնէ»: Ասկէ առաջ խօսած ենք, հոգեւից ըմպելիի մասին, խմիչք: Հոգին լեցնող: Բայց այդ խմիչքը իմ սրամոքսս է որ պիտի լեցնէ, քիչ մըն ալ գուարճութիւն պիտի փայ, իսկ ժամանակը որ անցնի, գլխու ցաւ: Ուրեմն ո՞ր է որ կը փնտրեն իմ հանգիստս եւ այդ հանգիստս գտնելու համար ի՞նչ է որ կը փափաքիմ, եւ ինչո՞ւ, որովհետեւ արդէն կը նմանիմ խոպան, ճաթաբաժ, անջուր մնացած հողի: Դաւիթ ճիշդ այդ փեղի մէջ կ'ապրէր, եւ այդպիսի վիճակի մէջ էր: Այն նոյն անապարքը, որմէ անցաւ Իսրայէլի ժողովուրդը, բայց փրկուեցրով: Իսկ Դաւիթի պարագային փափաքով, առաւել եւս զԱստուծոյ ունենալու: Ուրեմն, ինչ բանի կը փափաքի՝ ջուրի:

բ. Աստուծմէ կախեալ ըլլալու: Դաւիթ իր փրկութեան մէջ Աստուծոյ ապաւինեցաւ, Անկէ կխեալ եղաւ իր փրկութիւնը: Անկէ սպասեց իր ազատագրումը: Անկէ խնդրեց, որ զինք գորացնէ: Ահա թէ ինչու Դաւիթ փաճար կու գայ Աստուծոյ գորութիւնը եւ փառքը տեսնելու եւ այդ գորութենէն բաժին մը խնդրելու:

գ. Ընորհակալ ըլլալու: Դաւիթ իր նեղութեան եւ դժուարութեան պահուն, Աստուծոյ շնորհակալութիւն կը յայտնէ: Յաճախ մեր մարդկային դրուածքին մէջ, երբ նեղութեան եւ դժուարութեան մէջ ըլլանք, ընդհանրապէս կը դժգոհինք, կը տրտնջանք: Դաւիթ նաեւ Աստուծոյ սիրոյն վայելքը ունեցաւ, որուն համար ալ կ'արտայայտուի ըսելով. «քու սերդ կեանքէն աւելի կ'արժէ, ուստի շրթներս պիտի գովաբանեն քեզ, ամբողջ կեանքիս ընթացքին պիտի օրհնաբանեն եւ ձեռքերս աղօթքով բարձրացնեն»:

դ. Բաւարարում ըլլալու: Դաւիթ շնորհակալ է Աստուծոյ փրկումով ու մանաւանդ բաւարարում, կշտացած: Երբ Աստուծոյ ներկայութեամբ լեցուն է կեանքդ, հոգիդ, ալ ուրիշ բանի մասին չես մտածեր, որովհետեւ հոգին արդէն գրաւ իր փնտրածը: Անոր համար ալ մարդկային դրուածքը, երբ փակաւին հոգին պարապ է, եւ կ'ուզէ լեցնել, որ երբեք ալ պիտի չլեցնուի նիւթական փութալներով, անոր համար ալ մարդը պիտի ըլլայ անհագ, այսինքն՝ չհագեցող: Ընչաքաղց, ուզելու աւելին ու աւելին: Անոր համար ալ կըլսենք, «Աչքը ծակ», չհագեցող: Բայց Դաւիթ բաւարարում է ու շնորհակալ է Աստուծոյ փրկումով: Ի՞նչ է Աստուծոյ փրկումը, Իր ներկայութիւնը: Աստուած պարբասար է փալու մեր պէտքերը, եւ ոչ թէ մեր ուզածը:

ե. Աստուծոյ մասին մտածելու: Դաւիթ իր նեղութեան եւ հալածանքին մէջ կը մտածէ Աստուծոյ մասին, Անոր ըրածներուն մասին, որովհետեւ օգնական եղար ինձի, ու մանաւանդ՝ Անոր փրկում խոստումին մասին, դուն զիս պիտի փրկես քու խոստումիդ համաձայն:

զ. Վարահութիւն ունենալու: Դաւիթ ամբողջական վարահութիւն ունեցաւ Աստուծոյ, եւ կը խոստովանի ըսելով. «Քեզի կատուած կը մնամ եւ քու աջդ կը պահէ զիս»:

է. Աստուծոյ պաշտամունքը ընծայելու: Անդադար փառք փալու Աստուծոյ եւ օրհանաբելու Անոր սուրբ անունը: